

Գիրքը լուսապատճենահանվել է  
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից և ներկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

Library

ՄԱՅՆ ԿՈՒՅՆՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅՐ ԿՆՐԱԿՈՒՄՆ ԸՐԿՆԵԱԼ, ՀԱՅԱՍՏԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ  
ԼՈՒՄԻՊՈՏՔԵԼԱԶԱՆԵՆԻ ԳՐԹԵՐ:

ԹԿՈՅՆ ԳՐԹԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՆ՝

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՈՂՆԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՆ:  
ՑԱՆՎԱԼՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵՐԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵՁ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)



«ՆՈՐ ԱՇԽԱՐՀ»  
ԾԱՌՈՒՄԱԶԱՐ



ՄՐԳԵՐԻ ԵՎ  
ԲԱՆԶԱՐԵՂԵՆԻ  
ԲՈՒԺԱԿԱՆ  
ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



**Վ.Շ Ասրանյան**

**ՄԻՓԵՐԻ ԵՎ ԲԱՆՁԱՐԵՎԵՆԻ  
ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**I տպագրաց 04**



ԳՄԴ 53.59

Ա 649

Ասլանյան Վ. Շ.

Մրգերի և բանջարեղենի բուժական հասկությունները Եր. 1997-թ.  
48 էջ

Ա 649

Անոտացիա

Գիրքը առողջ, բուժական սննդառության մասին և նորոքը  
քաղված է տարբեր ազգերի միջնադարյան և ժամանակակից  
ժողովրդական քեշկության աղբյուրներից, գիտական գրական-  
ությունից, Հայաստանի բնակյացների միության փաթեթի Հա-  
րատ, կիրառական նյութի օգնությամբ բնօրինակ կերպարված ոչ  
միայն կանխարգելիչ հիվանդությունների առաջացումն ու գուրդա-  
ցումը իր օրգանիզմում, այլև առանց վտանգելու առողջությունը,  
զբաղվել ինքնաբուժմամբ:

Ա  $\frac{410703000}{804(01)-95}$  -95

ԳՄԴ 53.59

ISBN5-8079-0575-x

© Ասլանյան Վ.Շ.

## Բովանդակություն

Առաջաբան	5
Գեղամիջոցների կիրառական եղանակները	6
ԲՊՍԿԵՐԻ ՕՐԻԵՒՄԱԿԱՆ ՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
Ճիլուձ	7
Գեղա	8
Բալ և կեռաս	8
Սերկիկի	9
Նարինջ	10
Նուռ	10
Թուզ	11
Տանձ	12
Կիտրոն	13
Շազանակ	15
Ալոն	15
Մասուր	15
Հոն	16
Մանդարին	17
Նուշ	17
Ընկույզ	18
Պնդուկ	20
Մալոթ	20
Պիստակ	21
Խնձոր	22
Թուք	22
Կծոխտը	23

Հապալաս	24
Խչաղող	25
Չիչխան	26
Մոշ	28
Ելակ, գետնամորի	28
Ազնվամորի	29
Հաղարթ	30
<b>ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b>	
Չմերուկ	31
Բաղրիցան	32
Սեխ	33
Կաղամբ	34
Կարտոֆիլ	35
Մոխ	36
Գազար	37
Վարունգ	38
Բողկ	38
Շաղգամ	39
Պոմիդոր	40
Ծնեբեկ	40
Դդում	40
Սխառր	41
Ավելուկ	42
Ճակնդեղ	42
Պղպեղ	43
Սպանախ	43
Հիվանդությունների բուժման անվանացանկ	45

## ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ընթերցողը շատ լավ ծանոթ է դեղաբույսերի կիրառությանը . գրական շուկան հեղեղված է այդ բնագավառի բազմաթիվ գրքերով, գրքույկներով, պաստառներով, որոնք իրար կրկնելուց զատ երբեմն նաև բուժական նորություններ են մատուցում: Դեղաբույսերի կիրառման համար անհրաժեշտ է դրանց ճանաչել, հավաքել կամ ձեռք բերել դեղատներից, որը միշտ չէ, որ կնարավոր է փնտնել: Մինչդեռ մենք ձեռքի սակ ունենք ավելի մատչելի, բուժական հասկաթյուններով ավելի ազդու և օգտագործման սեփականից ավելի պարզ բուժիչ միջոցներ՝ մրգերն ու բանջարեղենը, որոնք կարելի է կիրառել առանց խստագույն կշռումների ու չափասահմանման: Դեռևս հնադարի բժիշկները նշել են, որ մարդու սնունդը պետք է բուժիչ լինի, որպեսզի լրացուցիչ դեղամիջոց ստեղծելու կարիքը չզգացվի, դրանով առաջ քաշելով առողջարար սննդի գաղափարը: Եւ մենք ունենք այդ սնունդը՝ մրգերն ու բանջարեղենը, որոնցից յուրաքանչյուրը, ունենալով որոշակի, միայն իրեն հատուկ բաղադրություն, ընդունակ է բուժել այս կամ այն հիվանդությունը, մնում է միայն խմանալ, քե սվյալ հիվանդության դեպքում, որ միրգը կամ բանջարեղենը պետք է օգտագործվի: Այսպիսի բուժումը ավելի պարզ է, բնական և արդյունավետ:

Ընթերցողների լայն շրջանակներին, ինչքան էլ զարմանալի է, անծանոթ են մրգերի բուժական հատկությունների մասին տվյալները: Այդ բացը լրացնելն է մեր նպատակը:

Գրքույկում ի մի են բերված տարբեր ժողովրդների բժշկարաններից քաղված բազմազան տեղեկություններ, դեղատոմսեր՝ մրգերի ու բանջարեղենի բուժական հատկությունների մասին՝ սկսած հնադարից: Բազմաթիվ տվյալներ են քաղված միջնադարի հայ հռչակավոր բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացու "Անգիտաց անպետ"(անգեղաների համար ոչ պիտանի) աշխատությունից և այլ տեղեկատուներից:

Հուսով ենք, որ գրքույկը պիտանի կլինի մեր ժողովրդին լայն խավերի համար՝ ստեղծելու առողջ, կենսալսինդ և հիվանդություններից ու վաղաժամ ծերությունից զերծ, դեպի մարմնական ու հոգևոր կատարելության բարձունքները ձգտող կասարակություն:



## ԴԵՂԱՍԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

**Թուրմ:** Մանրացված բուսական հումքը տեղադրել էմալապատ, ապակյա կամ հախճապակյա ամանում, ջուր լցնել: Կափարիչով ծածկելուց հետո այն դնել եռացող ջրով ամանի մեջ և պահել 15 րոպե: Արանձին դեպքերում բուսական հումքը կարելի է մի քանի ժամ շարունակ պահել բարձր ջերմաստիճանային պայմաններում՝ չհասցնելով եռման վիճակի:

**Սպիրտային լուծույթ:** Պատրաստում են 70<sup>0</sup> կամ 40<sup>0</sup> քնդոթյան սպիրտով (կամ օղիով): Մանրացված բույսերը լցնում են ապակյա ամանի մեջ, ավելացնում են սպիրտը և սենյակային ջերմաստիճանում, մրության պայմաններում պահում են 7-8 օր:

Սովորաբար մեկ բաժին հումքին ավելացնում են նույն քանակի սպիրտ, եթե դեղատոմսի մեջ կոնկրետ քվեր չեն նշված: Մեկ շաբաթ անց լուծույթը քամում են մի քանի շերտանոց մաղախով: Անկախ զույնից՝ լուծույթը պետք է պարզ և բափանցիկ լինի:

Սպիրտային լուծույթը կարելի է երկար ժամանակ պահել առանց բուժական հատկությունների կորստյան, այն սովորաբար օգտագործում են կաթիլների տեսքով:

**Քսուր:** Պատրաստում են ճարպերի օգնությամբ՝ խոզի հալեցված յուղով, կովի յուղով, կարագով, վազելինով (գերադասելի է դեղինը) և այլն: Ճարպի վրա ավելացվում է կամ բույսից ստացված ալյուրը, կամ թուրմը, սպիրտային լուծույթը, քարմ հյութը: Խառնուրդը պետք է մանրակրկիտ ձևով տրորվի, խառնվի, քանի դեռ մինչ այդ տաքացված (կամ հալեցված) ճարպը չի սառել: Սովորաբար 1 մաս բուսական հումքին ավելացնում են 4 մաս ճարպ:

**Մոնոդիետա ( միակերություն):** Սույն զրքույկով շատ է խոսվում այս մեթոդի մասին: Այն կարելի է կիրառել յուրաքանչյուր մրզի կամ բանջարեղենի վերաբերյալ: Մեթոդի էությունը կայանում է նրանում, որ 3-35 օր անընդհատ բացի տվյալ մրզից կամ բանջարեղենից ոչ մի տեսակի սնունդ չեն օգտագործում, որպեսզի ուժգնացվի տվյալ մրզի (բանջարեղենի) կոնկրետ բուժական ազդեցությունը օրգանիզմի վրա:

Օրինակ, քանի որ կան՝ տվյալներ, որ վարունգը նպաստում է առանների, լնդերի, եղունգների, մաշկի հիվանդությունների բուժմանը, նշանակում է, որ առանց վախենալու ինչ-ինչ բացասական հե-

տևանքներից, կամ առանց "մասնագետին" դիմելու, կարելի է տնային պայմաններում 3-5 օր ( եթե կոնկրետ ժամանակի մասին ցուցում չկա) օգտագործել միմիայն թարմ վարունգ: Դրանով դուք կուժգնացնեք վարունգի բուժական հատկությունները օրգանիզմի վրա: Այս սկզբունքը կարող է կիրառվել ցանկացած մրգի կամ բանջարեղենի նկատմամբ. բուժական տեսողությունը որոշում է ինքը՝ կիրառողը, ելնելով ինքնազգացողությունից:


**Բնաբուժական ոսկյա օրենքներից.**

**Օրենք 1:** Խստիվ արգելվում է ճաշից հետո միքո ուտելը: Միքոը պետք է ընդունել սոված վիճակում, եփած սննդի ընդունումից 40-90 րոպե առաջ կամ 2 ժամ հետո: Նախաճաշը պետք է կազմված լինի միայն մրգից:

**Օրենք 2:** Եփած սննդի հետ միասին հնարավորին չափ շատ կանաչեղեն կերեք:

**Օրենք 3:** Մարդու սննդի 60-70 %-ը պետք է կազմված լինի հում մրգերից ու բանջարեղենից:

## ՄՐԳԵՐԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



### ԾԻՐԱՆ (ԱՅՐԻԿՈՍ)

Դեռևս մեր թվարկությունից առաջ Ալեքսանդր Մակեդոնացին ծիրանը Հայաստանից Հունաստան է տարել "հայկական խնձոր" անվանմամբ:

**Բաղադրությունը:** Ջուր՝ 70-90 %, շաքարներ՝ 4.5-14.5 %, ազոտային թթուներ՝ 1.2-1.4%, քրոմներ՝ 0.16-2%, պեկտիններ՝ 0.05-1, 06%, բջջաթաղանթ՝ 0.4-0.6%, մոխրային մնացորդ՝ 0.6-0.8%: Պարունակում է նաև 5-13 մգ (100 գր. չոր նյութում) վիտամին A, 3-3.2 մգ վիտամին C, 0.056-0.058 վիտամին B2, մագնեզիում, պոլինձ, ցինկի աղեր, միկրոէլեմենտներ:

**Կիստումը:** Ծիրանը նորմալացնում է աղիների աշխատանքը, խթանում է երեխայի աճը, բարելավում է տեսողությունը, նպաստում է սիրտ-անոթային հիվանդությունների բուժմանը: Օգտագործում են նաև սակավարյունության, վերին շնչառական ուղիների բորբոքման, նեֆրիտի դեպքում:

Կորիզներից ստացված յուղը չինական բժշկության մեջ օգտագործվում է որպես դեղամիջոցների լուծիչ, քսուկ: Պատուղներից պատրաստված չիրը (առանց ջերմային մշակման) ունի շատ մեծ սննդային արժեք և ձմռանը օրգանիզմի համար վիտամինների աղբյուր է հանդիսանում:

Կապ է հայտնաբերված ծիրանի ու երկարակեցուքյան միջև: Ծիրանը օժտված է օրգանիզմը քափոններից մաքրելու հատկությամբ: Կա յուրահատուկ սննդաբուժության մեթոդ՝ ծիրանային մոնոդիետա: Մեթոդի էությունը կայանում է նրանում, որ 7-14 օր սնվում են ծիրանի հասուն պատուղներով (օրական 300-1000գր): Ուրիշ ոչինչ չի կարելի ուտել, անգամ ուրիշ մրգեր:

Ըստ հայ միջնադարյան բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացու տերևների եփուկը օգտակար է դիֆտերիայի դեպքում՝ ողողումների տեսքով, կորիզներից ստացված յուղը նպաստում է ականջների աղմուկից ձերբազատմանը:

### ԴԵՂՁ (ПЕРСИК)



Բաղադրությունը: Ջուր՝ 80%, շաքար՝ 4.3-4.7%, ամիսաջրեր՝ 6.5-7.5%, ազոտային նյութեր՝ 0.45-0.55%, թթուներ՝ 1%, մոխրային մնացորդներ՝ 0.74 %: Պարունակում է՝ նաև 0.62 մգ վիտամին A, 12-21 մգ վիտամին C, կալիումի, մագնեզիումի, ֆոսֆորի, երկաթի, կրեմնի, ցինկի աղեր, կարոտիններ, եթերային յուղեր:

Կիրառումը: Ուժեղացնում է մարսողական գեղձերի գործունեությունը, օգտագործում են անհաղթահարելի փսխումների դեմ: Ծաղիկների ու տերևների թուրմը վերացնում է վտրկապությունը: Մերմերի բաղադրության մեջ կա 57 % յուղ. Տերևների հյութը, Ամասիացու տվյալներով, սպանում է բոլոր տեսակի ճիճուներին:

### ԲԱԼ ԵՎ ԿԵՌԱՍ (ВНИИЯ И ЧЕРЕШНЯ)

Բաղադրությունը: Ջուր՝ 80%, շաքարներ՝ 10-11 %, ամիսաջրեր՝ 1 8-21 %, ազոտային նյութեր՝ 0.6-0.75 %, բջջաբաղանք՝ 6%, մոխրային մնացորդ՝ 0.65 %: Բալը սխառունակում է նաև 0.36-0.6 մգ A, C, B խմբի վիտամիններ, օրգանական աղեր:

Կիրառումը: Բալն ու կեռասը օգտագործում են օրգանիզմում քարեր ունենալու, միզատար ուղիների ինֆանգուրյան դեպքում: Բժիշկ

Մյուզեն գտնում է, որ այս պտուղների կորիզներից ստացվում է յուղ, որը հաջողությամբ օգտագործվում է պողպատալարի դեմ, նպաստում է լյարդի, երիկամների, լեղաձորանի բարային հիվանդությունների բուժմանը, ոչնչացնում է գորտնուկները, մաշկային լաքաները:

Մալերանյան դպրոցը նշում է, որ բայն ու կեռասը մաքրում են ստամոքսը, արյունը, նորմալացնում մարսողությունը: Ճյուղերից դուրս եկող բուսախեժը, ըստ Ամիրզովլաթ Ամասիացու, տերևների հետ եփելու դեպքում պահպանում է մրսելուց, բուժում ուռուցքները, թոքերի խոցերը, լուծը, քարերը: Բուսախեժի վառիչ ցրի հետ խմելուց սրում է տեսողությունը, դադարեցնում հազը, լավացնում դեմքի գույնը:

Ըստ Գ Բուխանի՝ բալը չափավորում է առատ քրանարտադրությունը, նորմալացնում է աղիների աշխատանքը, դիմադրում թունավորմանը:

Մև, վայրի բալը նպաստում է էպիլիպսիայի, շիզոֆրենիայի բուժմանը: Բայի ծաղիկներից ստացված նյութը կաթեցնում են աչքի մեջ դեղնության և արյունազեղման բուժման նպատակով, իսկ մանրացրած տերևները լցնում են քթանցքների մեջ արյունահոսության դեմ: Կաթի մեջ եփված տերևները օգտակար են դեղնախտի դեմ, իսկ պտուղները կաթի հետ օգնում են արտրիտի դեպքում:

Ըստ Վան-Սվետենի՝ բայի ճյուղերի կեղևը, չորացնելու և զինու մեջ պահելու դեպքում, հաջողությամբ կարելի է օգտագործել դաշտանային առատ արյունահոսությունների դեպքում:

Կարելի է կիրառել բալով կամ կեռասով մոնոդիետա (առանձին-առանձին)՝ 5-8 օր տևողությամբ:

### *ՄԵՐՆԵՎԻԼ (AՅՅԱ)*

Բաղադրությունը: Ջուր՝ 80%, շաքարներ՝ 10-10,5%, ազոտային նյութեր՝ 0.35-0.45 %, չլուծվող նյութեր՝ 14-16 %, խնձորաթթու 0.25-0.30 %, դարադանյութեր՝ 0.03 %, բջջաթաղանթ՝ 2.5-3 %, մոխրային մնացորդ՝ 0.35 %, մակրո և միկրո էլեմենտներ (կալցիում, երկաթ, կալիում, մագնեզիում, ֆոսֆոր): Պարունակում է նաև 10-20 մգ վիտամին C, B, խմբի վիտամիններ:

Կիրառումը: Հին աշխարհի բոլոր բժիշկները խորհուրդ են ավել սերկկիր կիրառել աղիքային հիվանդությունների՝ դիզենտերիայի, լուծի, հետանցքի ճարվածքների դադարեցման նպատակով:

Ըստ Կոստելենի՝ սերկկիրը, որն ավելացվել է բոքախառվ հիվանդի սննդակազմին, օրգանիզմ տանին մայցնելու լավագույն ձևն է: Ռուսները կորիզի եփուկից ստացված լորձը օգտագործում են այր-


վածքներին, սլաուկների ճաքերին քսելով, աչքերի բորբոքումների, կոկորդային ցավերի, արյունոտ լուծի, բրոնխիալի, կոլիալի, գազերի կուտակման դեպքում:

Հայերը կորիզներից ստացված լորձը օգտագործել են ուժեղ հազի դեպքում: Մերկկիլի բուժական հատկությունները հիմնականում արտահայտվում են ստամոքս-աղիքային համակարգի հիվանդությունների բուժմամբ: Ամիրդովլաթը նշում է, որ ծաղիկների հյութը, աչքի մեջ կաթեցնելուց, բարելավում է տեսողությունը, ստուղները ամրացնում են սիրտը, դադարեցնում դաշտանը, օգնում միզումից առաջացող այրոցի դեպքում, մաքրում լյարդը, ստացված յուղը չափավորում է առատ քրտնարտադրությունը:

### ՆԱՐԻՆՁ (АПЕЛЬСИН)

Բաղադրությունը: Ջուր՝ 90 %, շաքարներ՝ 4.5 %, ածխաջրեր՝ 1%, թթուներ՝ 2.4-2.7 %, ազոտային նյութեր՝ 0.6-0.7 %, բջջաքաղանթ՝ 1-1.2 %, մոխրային մնացորդ՝ 0.4-0.5 %: Պարունակում է նաև 0.15-0.27 մգ վիտամին A, 0.04-0.08 մգ B1, 0.02-0.04 մգ B2, 60-67 մգ վիտամին C, 0.22 մգ վիտամին E, կարոտին:

Կիրառումը: Նարինջը օգտագործում են աղիքային, երիկամային հիվանդությունների դեպքում: Ուժեղ տենդը շատ արագ բուժվում է, եթե առավոտները հիվանդը խմի սպիտակ զինի, որը եռացվել է նարնջի հետ: Կեղևի եփուկը արվում է ուժեղ արտահայտված դաշտանի դեպքում: Ըստ Ամիրդովլաթի՝ կեղևով երեսը շփելը արագացնում է մազերի աճը, յուղը օգնում է ձեռքերի դողդողոցի, ատամնացավի դեմ, հյութը՝ ճիճուների ու ոսկրային ցավերի դեմ:



### ՆՈՒՌ (ГРАНАТ)

Բաղադրությունը: Ջուր՝ 83-85%, շաքարներ՝ 10-19%, ազոտային նյութեր՝ 0.5-0.6%, ճարպեր՝ 0.15%, էքստրակտային նյութեր՝ 1.6-1.8 %, բջջաքաղանթ՝ 2.8-3%, մոխրային մնացորդ՝ 0.28-0.3%: Պարունակում է նաև 5 մգ վիտամին C, B խմբի վիտամիններ,

դարադանյութեր:

Կիրառումը: Առաջինը Հիպոկրատն է հիշատակում նուան բուժիչ հատկությունների մասին: Նա նուան հյութը օգտագործել է ստամոքսային հիվանդությունների, իսկ կեղևը՝ դիզենտերիայի ու վերքերի բուժման դեպքում:

Բերտուլիներին նուան հյուսրը օգտագործել է թուրքի դեմ: Հյուսրը կարելի է օգտագործել նաև կոկորդային հիվանդությունների բուժման համար: Արմատի կեղևի եփուկը ճիճվասպան է: Կեղևը կարելի է նաև չորացնել, աղալ և խառնել սննդի հետ: Ընդհանրապես, չինական բժշկության մեջ խիստ տարածում է գտել չորացրած բույսերի, պտուղների, սերմերի աղացված ( ալյուրի տեսքով) օգտագործումը: Չինացի բժիշկները գտնում են, որ դեղաբույսերը ուժգին ազդեցություն են գործում այս տեսքով և ոչ թե եփած վիճակում):

Ճաղկի եփուկը օգտագործում են բերանի հիվանդությունների, լուծի դեպքում: Այրվածքների դեպքում կարելի է վերքը լվանալ մինչև 10 % նոսրացված նուան հյուսրով, որից հետո պետք է ցանել պտղի կեղևի փոշի և վերքը չկապել: Այն զարմանալիորեն արագ է առողջանում:

Նուռը օգտագործում են նաև ջրգողության, դեղնախտի, սրտի անկանոն աշխատանքի դեպքում: Արևելյան ժողովրդական բժշկության մեջ մանրացված արմատը հալվեի հետ որպես ցավազրկող միջոց է օգտագործվում:

Մի քանի դեղատոմսեր.

1 Մեկ թեյի գդալ ծաղիկները կամ պտղակեղևը եփել մեկ բաժակ ջրի մեջ, պահել 2 ժամ, քամել և օգտագործել օրական 3 անգամ ճաշից առաջ՝ 1 ճաշի գդալ:

2. Հյուսրը օգտագործել ուտելուց 20 րոպե առաջ, օրական 4 անգամ 1/4 բաժակի չափով:

3. 2-3 ճաշի գդալ ծաղիկները փաթաթել թանգիֆի (մառլայի) մեջ, մի քանի րոպե պահել եռացող ջրում և թրջոց դնել բորբոքված տեղերին:

Ամիրոբվլաթը գրում է, որ ճարպի հետ ճզմված հյուսրը կաթեցնում են ականջի մեջ ցավերի դեպքում, պտղի հյուսրը թարթիչներին են քսում բորբոքման դեպքում, տերևները ամրացնում են մազերը:

### *ԹՈՒՉ (ՄՈՋՈՐ)*

Բաղադրությունը: Ջուր՝ 83-85 %, շաքարներ՝ 3.6-3.7 %, ազոտային նյութեր՝ 0.8 %, ճարպեր՝ 0.31-0.33%, էքստրակտային նյութեր՝ 12-12.5 %, բջջաթաղանթ՝ 1.1-1.3 %, մոխրային մնացորդ՝ 0.6-0.73%: Պարունակում է նաև մակրո, միկրոէլեմենտներ, ֆերմենտներ, B խմբի վիտամիններ, C վիտամիններ:

Կիրառությունը: Թուզը բուժում է փորկապությունը, ստամոքսային հիվանդությունները, բարելավում է արյան կազմը, թոքերի ու երիկամների գործունեությունը, վերացնում է երիկամային քարերը, մի-



զամուղ է, ունի հակաբորբոքային, հակամիկրոբային ընդունակություն:

Տերևների եփուկը միջնադարյան Հայաստանում օգտագործում էին հազի դեպքում, իսկ կաթի հետ եփելու դեպքում օգտագործվում էր կոկորդի ողողման համար: Թուզը հիանալի դիետիկ, սննդարար միջոց է, կարելի է կիրառել թզային մոնոդիետա 7-14 օրով, որը խիստ օգտակար է հատկապես ստամոքսային հիվանդությունների ու սակավարյունության դեպքում:

Տերևներից արտադրվող հյութը՝ "կաթը" մեծ հաշտությամբ օգտագործվում է քսուրի տեսքով մաշկային հիվանդությունների, վերքերի բուժման նպատակով:

Ամիրդովաթը նշում է, որ ամենաարժեքավորը սպիտակ թուզն է, այնուհետև կարմիրը, սևը: Տերևներից, պտուղներից արտադրվող սպիտակ հյութը՝ "կաթը", ըստ նրա, բուժում է զորտնուկներից, վիտիլիգոզից (մաշկի պիգմենտացիայի կորուստ)՝ քսելու ձևով, օգտակար է երիկամային ու միզափամփուշտային հիվանդությունների դեպքում: Իսկ ճյուղերից ստացված մոխիրով հոգնա են անում դիզենտերիայի, լուծի դեմ: Բույսի կաթը խմում են նաև կարիճի խայրոցի, շան կծածի դեմ ( մեղրի հետ): Տերևները ծամելը մաքրում է ստամոքսը: "Կաթի" ու մեղրի խառնուրդի կաթեցումը աչքի մեջ կանխում է կատարախսով հիվանդանալուց: Չավազանց արժեքավոր սննուկ է բզի չիրը: Չիրը անանուխի, ուրցի հետ ուտելու դեպքում մաքրում է միզափամփուշտը, երիկամները: Թզի չիրը շատ օգտակար է ուտել ընկույզի հետ: Իսկ եթե չիրը եփվի 1 լ. զինու քացախի հետ և 1 օր թողնվի, այնուհետև թրջոց դրվի փայծաղի շրջանում, շատ կօզնի բուժմանը:



### *ՏԱՆՉ (ԴՐՅՄԱ)*

Բաղադրությունը: Ջուր 75-83%, շաքարները՝ 5-14 %, ազոտային նյութեր 0.3 %, խնձորաթթու՝ 0.1-0.25%, պեկտինային նյութեր՝ 3.4-3.6 %, մոխրացող մնացորդ՝ 0.3%: Պարունակում է նաև 10 մգ. վիտամին C, A, B խմբի և E վիտամիններ:


Կիրառումը: Մեծ քանակությամբ տանձի ընդունումը հանգեցնում է փորկապության: Կարելի է օգտագործել լուծի, դիզենտերիայի դեպքում: Հյութը միզամուղ է, կիրառում են ցինգայի, երիկամային քարերի դեմ: Մխիթար Հերացին սննդարուծումը ավելի բարձր է գնահատել, քան դեղորայքայինը և այդ առումով մեծ

տեղ էր տալիս տանձի, սերկևիլի, խնձորի, սեխի, նռան, հոնի քարճ հյութերի կիրառությամբ:

Տանձը ևս խնձորի, սեխի, բաճաճի պես ընդունակություն ունի շարունակելու հասունանալ ծառից հավաքելուց հետո:

Տանձի կոփիզները պետք է ծամել ու կուլ տալ, դրանք ճիճվապան են: Տանձը այն սակավ պտուղներից է, որն օգտակար է՝ սնկային հիվանդությունների դեպքում: Տերևների եփուկը մրսածության, անգինայի, խոցերի դեմ է, իսկ քաղցր տանձը՝ թոքերի չարորակ ուռուցքների: Ամիրդովաթը հասուն տանձը օգտագործում էր սրտի ամրացման, ստամոքսի բուժման, սրտխառնոցների դադարեցման համար: Տանձի չիրի եփուկը լուծ է առաջացնում:

### ԿԻՏՐՈՆ (ՊԻՄՈՒ)



Բաղադրությունը: Ջուր՝ 90-91 %, շաքարներ՝ 0.7-0.9 %, կիտրոնաթթու՝ 5-9 %, ազոտային նյութեր՝ 0.05 %, մոխրացող նյութեր՝ 0.2 %: Պարունակում է նաև միկրո և մակրոէլեմենտներ, 40-50 մգ վիտամիններ C, B խմբի վիտամիններ, A վիտամին:

Կիրառությունը: Պլինուսը նշում է, որ կիտրոնը հիանալի հակաթույն է օձի խայթոցի դեմ: Ավիցեննան կիտրոնի հյութը համարել է հզոր միջոց սրտի տենդագին խփոցների և դեղնախտի դեմ: Նա հղի կանանց կիտրոն էր տալիս սրտխառնոցների ու փսխումների դեմ:

Գիտական գրականության տվյալներով ցիտրուսայինները օգտակար են շաքարախտի դեպքում, և խորհուրդ չի տրվում օգտագործել կոլիտի, ստամոքսի խոցի, էնտերիտի դեպքում: Այս տվյալները ոչ բոլոր դեպքերում են համընկնում ժողովրդական բժշկության տվյալներին: Կիտրոնը կարելի է մանր կտրտել, խառնել մեղրի հետ 1:1 հարաբերությամբ և 1 օր պահելուց հետո ստացված հյութը խմել օրական 1-2 անգամ ճաշի գոյալով: Այս հյութը չափազանց արժեքավոր, վիտամինային հյութ է հանդիսանում՝ հյուծվածության, ցինգալի, ուժասպառության դեպքում, խթանում է երեխաների աճը:

Կիտրոնի հյութը վերացնում է փորկապությունը, պարունակում է մեծ քանակով կալիում և բուտիր, որոնք վիտամին C-ի մեծ պարունակության շնորհիվ ամրացնում են արյունատար անոթները: Սա վերաբերում է բոլոր ցիտրուսային մրգերին:

Ժողովրդական բժշկությունը գտնում է, որ երիտասարդության պահպանման համար շատ օգտակար է ամեն առավուտ սոված վի-

ճակում խմել 1 թեյի գդալ կիտրոնի հյութի, 1 թեյի գդալ մեղրի և 1 թեյի գդալ բուսական յուղի խառնուրդ:

Կիտրոնի կեղևը, որը սովորաբար դեն է զցվում, շատ օգտակար է. նրա մեջ պարունակվում է օրգանիզմի ցիտրոնինի պահանջի 3-4 օրվա չափաքանակը: Կեղևը օգտագործեք սննդի մեջ, թեյի հետ և ուրիշ միջոցներով:

Կիտրոնի կեղևից պատրաստված յուղը հակազրիպային միջոց է: Այն օգտակար է նաև քրոնիկական հազի բուժման համար: Պատրաստվում է հետևյալ կերպ. մեկ կիտրոնը 1 բուլետով դնել շատ տաք ջրի մեջ, անցկացնել մսադաջով, խառնել 100 գրամ փավկեզված կարագի հետ և ավելացնել 1-2 ճաշի գդալ մեղր: Այսպիսի կարագը պահել նույն պայմաններում, ինչպես սովորական կարագը:

Ցանկացած հիվանդության դեպքում կարելի է կիտրոն օգտագործել, որովհետև վիտամին C-ի մեծ քանակությունը նպաստում է արագ բուժմանը: Կիտրոնի հյութը ջրի հետ խմելուց իջեցնում է բարձր ջերմությունը: Փորձը ցույց է տալիս, որ կարելի է խուսափել լնդերի և ստամանքի փչանալուց, եթե ամեն առավուտ ստամանքը մաքրվեն կիտրոնի հյութով: Դրա համար առամի խոզանակը քրջեք ջրով ու կաթեցրեք նրա վրա մի քանի կաթիլ կիտրոնի հյութ:

Կիտրոնի հյութը օգտակար է նաև բերանի խոռոչի ու լեզվի բորբոքման, ստենդի, քթից արյունահոսության, ախիլի դեպքում. «Մեար և նշել, որ քիմիական ճանապարհով ստացված լիմոնաքթոն այդպիսի բուժական հատկություններ չունի:

Դեկտոր Ժիարդերոն խորհուրդ է տալիս կիտրոնի հյութը ամեն 2 ժամը մեկ, ճաշի գդալով ընդունել քրոնիկական թուրքի, պոլիսերոզիաի դեպքում:

Ժոբերը առաջարկում է կիտրոնի հյութը զանգրենայի դեպքում: Բուխանը կիտրոնի կեղևը օգտագործում է պոդագրայի, ախորժակի կորստի, սկորբուտի, նյարդային հիվանդությունների դեպքում:

Գորյախնովը հյութը օգտագործում է մաշկային ցանի, պզուկների դեմ:

Շնեյդելը հաստատում է, որ հյութը նպաստում է տարբեր սեռակի ջրգողության բուժմանը, անգամ եթե այլևս ոչ մի դեղամիջոց չի օգնում: Ս. Կորինտելին կիտրոնով բուժում էր սուր ունատիզմը, պոդագրան, ստամոքսային կատարները: Նա բուժումը սկսում էր նրանից, որ հիվանդին տալիս էր 1 ամբողջական կիտրոն՝ ուտելու և ամեն օր ավելացնում էր ևս մեկը, հասնելով մինչև 20 հատի և դրանով ավարտում էր բուժման կուրսը:

Ա.Խատովերը կիտրոնի հյութը օգտագործում էր ուրիշ դեղամիջոցների հետ կանացի զոնորեան բուժելու համար: Հյութը օգտա-

գործվում էր որպես քուր՝ դրանով անբարենպաստ (քթվային) միջավայր ստեղծելով հարուցչի համար և բարձրացնելով հյուսվածքների դիմադրողականությունը:

### **ՇԱԳԱՆԱԿ (КАШТАН)**

Բաղադրությունը: Ջուր՝ 60-62 %, ազոտային նյութեր՝ 4.3-4.5 %, ճարպեր 0.8-0.9, ածխաջրեր՝ 32-34, բջջաթաղանթ՝ 1-1.5%, մոխրացող մնացորդ՝ 1, -1.2%:

Պարունակում է նաև բավականին մեծ քանակությամբ B խմբի վիտամիններ, միկրո, մակրոէլեմենտներ:

Կիրառությունը: Իր բաղադրությամբ շագանակը մոտ է հացին: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում է որպես միզամուղ: Ազոտային նյութերի բարձր պարունակության շնորհիվ ընդդեմի, ընկույզի պես մսի վռխարինիչ է:

### **ԱԼՈՃ (БОЯРЫШНИК)**

Բաղադրությունը: Ծաղիկների մեջ կան երեքանյութեր,, պտուղներում՝ օրգանական թթուներ, ճարպեր, կարոտին, C վիտամին, դաբաղանյութեր, միկրո և մակրոէլեմենտներ:

Կիրառությունը: Ծաղիկները պետք է հավաքել մինչև լրիվ բացվելը, դա վերաբերում է ընդհանրապես բոլոր դեղաբույսերի, ծառերի ծաղիկներին: Ծաղիկներից պատրաստված թեյը օգտակար է սրտային հիվանդությունների, հիպերտոնիայի, նկրոզների, բորբոքային երևույթների ժամանակ:

Պտուղները նույնպես ունեն վերոհիշյալ հատկությունները, միայն չափից դուրս օգտագործելու դեպքում լուծ են առաջացնում:

### **ՄԱՍՈՒՐ (ШИПОВНИК)**

Բաղադրությունը: Պտուղները պարունակում են 3-18% վիտամին C, վիտամիններ՝ P, B1, B2, K, E, պրովիտամին A, 24% շաքար, երկաթ, օրգանական թթուներ, մակրո և միկրոէլեմենտներ: Սերմերում կան E վիտամին, ճարպայուղ, օրգանական թթուներ:

Կիրառությունը: Հիպոկրատը գրել է, որ մասուրը հակաբորբոքիչ միջոց է: Տիբեթական բժշկության մեջ պտուղները օգտագործվում են

թորախտի, աթերոսկլերոզի, նեվրասթենիայի ժամանակ: Պտուղները պարբերաբար օգտագործելը լուծում է երիկամային քարերը:

Քանի որ այդ բուժական հատկությունները հիմնականում պայմանավորված են պտուղներում վիտամին C-ի մեծ պարունակությամբ, իսկ ջերմային մշակումը ոչնչացնում է վիտամինները, գերադասելի է մասուրը օգտագործել հում վիճակում: Աշնան ամիսներին եթե նոր հասունացող պտուղները հում վիճակում ուտելը հաճելի է, ապա ճնշանը չորացրած պտուղների օգտագործումը առանց ջերմային մշակման, շատերին անհնարին է թվում: Պետք է վարվել հետևյալ կերպ. Վերցրեք 1-2 բուռ չորացրած մասուր, ավելացրեք 1-2 լ զով կամ սառը ջուր և սենյակային ջերմաստիճանում (18-20) պահեք 10-12 ժամ, որից հետո փափկած պտուղները ճմռեք ու ևս 2-3 ժամ հետո քամիչով անցկացնելուց հետո ստացված թանձր, կարմիր նյութը կամ այդ ձևով, կամ մեղր խառնելուց հետո խմեք: Սեկ սուրճի բաժակ հյութը բավարարում է օրգանիզմի C վիտամինի 1-2 օրվա պահանջը: Քամելուց հետո մնացած կորիզների և պտուղների մասնիկների վրա նորից ջուր լցրեք, հնարավորություն տալով վիտամինների և այլ արժեքավոր միացությունների անմնացորդ դուրսկորզմանը: Այդ գործողությունը կարելի է կրկնել 2-4 անգամ, մինչև որ քամելուց հետո մնան միայն կորիզը ու մաքուր լվացված կեղևը: Այլ եղանակով պատրաստված "մասրահյութը" արժեք չունի:

Ամիրդովլաթի տվյալներով մասուրը բուժում է աղիների խոցը, լնդախտը, լուծը, դադարեցնում է արյունահոսությունը, դադարեցնում ծերացումը:

Վիտամին C-ն համարվում է "վիտամինների վիտամին", որովհետև առանց նրա մասնակցության օրգանիզմում շատ ու շատ պրոցեսներ չեն կարող ընթանալ: Այնպես որ, մասուրի արժեքավորությունը ընդգծելու համար պարտադիր չէ բազմաթիվ հիվանդությունների բուժման ցուցակ գրել: Առավոտները սուլած վիճակում վերը նշված եղանակով ստացված մասուրի հյութից խմեք 1 սուրճի բաժակով, կերեք 1 խնձոր և դուր հրաժեշտ կտաք բազմաթիվ հիվանդությունների, եթե ունեք այդպիսիք, իսկ եթե առողջ եք, ապազա հիվանդությունների առջև ձեր մարմնի դռները կփակվեն:

### Հոն (КИЗИЛЬ)

Բաղադրությունը: Ջուր՝ 75-80%, շաքարներ՝ 14-15%, խնձորաթու՝ 2.7-3%, կալցիումի, կալիումի, մագնեզիումի, ֆոսֆորի, երկաթի միացություններ, 24-26մգ. վիտամին C:

**Կիրառությունը:** Գեոևս հնադարում հոնը օգտագործում էին լուծի դեմ: Երկաթի բարձր պարունակության շնորհիվ կիրառվում է սակափարյունության, շնչառական հիվանդությունների դեպքում: Կեղևի-եփուկից ու գարու ալյուրից պատրաստված խմորը նպաստում է մաշկային խոցերի բուժմանը: Թարմ տերևներից ստացված հյութը կիրառում են աչքի հիվանդությունների դեպքում, իսկ տրոփված պանդուրներից ստացված խյուսը շքի վրա դնելով կապում են ճակատին գլխացավի դեմ:

Հոնով կարելի է մոնոդիետա անցկացնել 5-7օր: Հոնի չիրը շնչու արժեքավոր սննդամթերք է ծմռան ամիսների համար:

Հայ ժողովրդական բժշկության մեջ հոնից պատրաստված լավաշը մեծ կիրառություն է գտել:

Ըստ Ամիրդովյաթ Ամասիացու, տերևների քարմ հյութը օգուտ է խայթոցների ու կծելու դեպքում, կարելի է նաև տրոփված տերևները դնել կծած կամ խայթած տեղամասին: Եթե կեղևը վառվի և մոխիրը լուծվի ջրի մեջ, կօգնի էկզեմայի, մաշկային ցանի դեպքում: Կեղևից ստացված ալյուրը թունավոր է:

### *Մանդարին (МАНДАРИНЫ)*

**Բաղադրությունը:** Ջուր՝ 88-95%, 40-50 մգ վիտամին C, 35մգ - կալցիում 155 միլիգրամ կալիում, 11մգ մագնեզիում, 17մգ ֆոսֆոր, 0.1մգ երկաթ, B խմբի վիտամիններ, 0.02մգ վիտամին E:

**Կիրառությունը:** Ակտիվացնում է աղիների աշխատանքը: Հյութը խորհուրդ է տրվում օգտագործել հատկապես ստամոքս-աղիքային համակարգի հիվանդությունների դեպքում, նպաստում է երեխաների աճին, կյուծված հիվանդների կազդուրմանը:

### *Նուշ (МИНДАЛЬ)*

**Բաղադրությունը:** Ջուր՝ 4-5%, ազոտային նյութեր՝ 18-19%, ճարպեր՝ 54-54.5%, էքստրակտային նյութեր՝ 17.5-18%, բջջաբաղանթ՝ 2.6-2.8%, մոխրացող մնացորդ 2.5%:

Պարունակում է նաև վիտամին A (քիչ քանակով) և բավականին շատ B խմբի վիտամիններ:

**Կիրառությունը:** Հնադարյան բժշկության մեջ նուշը համարվել է շատ արժեքավոր դեղամիջոց: Իբն Մասուդին չոր և տապալկած նուշը օգտագործել է աղիների թուլության դեմ, ցավու միզարտադրությունը մեղմելու համար: Ըստ Ռազեսի նուշը շատացնում և ակտիվացնում է սերմանահեղուկը, նպաստում է քաշի ավելացմանը: Ռու-



սական բժշկությունը լնդերի ամրացման համար խորհուրդ է տալիս բերանում միշտ նուշ պահել, այն նստատեղում է նաև ճիճուների ոչնչացմանը: Ըստ Ջորջերնիևյանի և Դորբոնրավովի նուշից ստացած յուղը նշանակվում է շնչառական, սննդառական համակարգի, միզասար ուղիների, սեռական օրգանների հիվանդությունների դեպքում:

Ըստ Ամիրդովլաթի դառը նուշը ունի մաքրող ազդեցություն: Այն պզուկներին ու էկզեմային քսելու դեպքում բուժում է դրանք, եթե խառնվի գինու հետ և լվացվի գլուխը, կվերացնի թեփը, իսկ եթե գինի խմելուց առաջ հինգ հասիկ նուշ ուտեք, չեք հարբի: Դառը նուշը նաև սրում է սեստոությունը, վերացնում միզակապությունը, հալեցնում միզափամփուշտի քարերը: Իսկ քաղցր նուշը թզի հետ ուտելուց օգնում է կատաղած շան կծելու դեմ: Կորիզների կեղևի եփուկը իջեցնում է քարձր ջերմաստիճանը, դադարեցնում է լուծը:

Նուշը, շնորհիվ ազոտային նյութերի ու ճարպերի քարձր պարունակության, շատ սննդարար է շաքարախտով տառապողների, միս չօգտագործողների համար:



### Ընկույզ (ОРЕХ ГРЕЦКИЙ)

Բաղադրությունը: Ջուր՝ 4.5-5%, ճարպեր՝ 51-62%, ազոտային նյութեր՝ 8.6-19%, էքստրակտային ազոտագուրկ նյութեր՝ 11-20%, րջջաքաղանք՝ 2.7-10%, մոխրացող մնացորդ՝ 1.5-2.5%: A և B վիտամիններ քիչ կան, իսկ ոչ

հասուն պտուղներում կա 1000-3000մգ վիտամին C (հաշվարկը ինչպես միշտ, 100գր չոր նյութի քաշով է արված):

Կիրառությունը: Հիպոկրատը և Դիոսկորիդը պաղի շուրջը գտնվող կանաչ կեղևի եփուկը աալիս էին խմելու ճիճուների դեմ: Հալենը և Պլենկը երիտասարդ, կանաչ ընկույզների հյութը մեղրի հետ տալիս են խմելու բերանային խոցերի բուժման համար: Բոլոր ընկույզի յուղը կիրառել է քարերի դեմ: Գուֆֆելյանը մի քանի կաթիլ յուղ էր կաթեցնում աչքերի մեջ ծաղկային հիվանդությունից, կարմրուկից տեսողությունը պահպանելու համար, օգտագործում էր նաև պտուկների ճարպերի բուժման դեպքում Յուդր քարերսը ազդեցություն է բողնում նաև վերքերի, խոցերի բուժման ժամանակ:

Տուրնեֆորսը ծառի կեղևը գինու մեջ որոշ ժամանակ պահելուց հետո աալիս էր ճիճուների դեմ ու դադարած դաշտանի վերականգնման համար:

Բացի դրանից, սևերենների ջրային բուրմը, գինու բուրմը օգտագործել են կսկորդային հեղձուկի, խոցերի ողողման համար: Այն

խմելու դեպքում դեղնախառի դեմ է: Ջրային թուրմով լոզանքները բուժում են մաշկային բորախար:

Վանյեն տերևներից ստացված էքստրակտը հաջողությամբ կիրառելի է ուռախառի, դեղնախառի, բորախառի բուժման համար:

Բուսի դրանից, բնկուզենու տերևները օժտված են տոնուսը բարձրագույն, նյութավորիսանակությունը լավացնող, քարախառին վերքերը բուժող, բորբորային պրոցեսները ճնշող հատկություններով: Կարևոր է նույն նպատակների համար օգտագործել նաև սպիրտային լուծույթը՝ Էկրադատելի է տերևներն ու երիտասարդ բնկույզները այդ նպատակով հավաքել զարմանք: Չորացած տերևներից պատրաստում են լուսն քուր՝ ձկնի և մոմի հետ միասին, որը նույնպես օժտված է տերևների հատուկ բուժիչ հատկություններով:

Ներկայացնենք կիրառական դեղատոմսերից մի քանիսը.

1) 1 ճաշի զդալ չոր տերևները 2 ժամ պահել նոր եռացրած 1 բաժակ ջրի սեջ (ամանի բերանը փակել) և քանել: Երեխաներին տալ օրական 3 անգամ 1 թեյի զդալով դեղնախառի, ուռախառի և վերը նշված այլ նիխանությունների դեպքում: Այդ թուրմով կարելի է նաև ողողել կոկորդը, բերանը բորբորային պրոցեսների դեպքում:

2) 3 թեյի զդալ չոր տերևները ավելացնել 2 բաժակ եռացող ջրին և վերցնել կրակից: Խմել թեյի ձևով օրական 2-3 ընդունումով:

3) 200-300 գր չոր տերևները եփել 1 և ջրի մեջ և այն օգտագործել լուսնոսների, լոզանքի համար:

Ամիրդովյաք Ամասիացին նույնպես լայն կիրառություն էր զտել բնկույզի համար. Նա նշում է, որ եթե չոր կեղևը վառվի և ցանվի խոզի վրա, վերջինս արագ կլավանա: Ընկույզը հագեցնում է Թզի հետ ուսկուղ բուրավորման դեմ է: Ստամոքսի ցավերի դեպքում կարելի է բնկույզը ծեծել և դնել պորտի վրա և կտալել.

Կեղևի մոխիրը գինու ու ձիթապաղի յուղի հետ սպորկուց հետո գլխին բազուզ ուրազացնում է մազերի աճը և կանխում է ճաղատագամը: Եթե սիլուսի ամբողջությունը պահող կեղևի մոխիրը խառնվի գինուն և աղի կոստուց՝ հեշտոց մուգնելու, կղաղարեզնի դաշաանը. Եթե ուղ նույն սիլուսի ծամվի ու դրվի չարորակ սուուցքի վրա, կոզնի

Կամուչ պարսկականի սիլուսիով բերանը ողողելու դեպքում ամբագնում է սուամները: Բնկուզենու սուվելումը բնկը նիխարեցնում է: Եթե ուրուքը ծամ պոսի և ծամի սիլուսի լուկույզ, դա կոզնի ներվախին սորոցթին, կվերազնի գեզումները: Եթե կանուչ պատուղներից բամսած կուրը կվախի խաղաղի կոռքի հետ միմչև քանձրանսար և դրանով ողորմնելու աղի, կնսպանսի կոկորդի ուուուցքի բուժմանը, կամրագնի չարժիլոց սամամները: Հասուն պաղակեղևի ալյուրը բնդունկուց

կրուժվի միզակապությունը: Պտուղներից ստացված յուղը ավելի օգտակար է, քան նուշի յուղը: Կանաչ պտղակեղևով կարել է սև գույն ներկել մազերը: Եթե պտղակեղևի հյութը մեղրի հետ կաթեցվի աչքի մեջ, փառը կանհետանա: Պտղակեղևի հյութը օգտակար է նաև դիֆթերիայի, մրսածության, կույր աղիի բորբոքման դեպքում:

Կանաչ պտղակեղևը արգելակում է հղիությունը:

Ահա թե Հայաստանում ինչպիսի մեծ կիրառություն է գտել ընկուզենին իր տերևներով ու պտուղներով: Նշենք նաև, որ ընկույզը հարուստ սպիտակուցային միրգ է և կարող է մեծ հաջողությամբ փոխարինել մսին:

### ՊՆԴՈՒԿ (ПЕЩИННЫЙ ОРЕХ)

Բաղադրությունը: Ջուր՝ 3.6-3.8 %, ազոտային նյութեր՝ 15.5-16%, ճարպեր՝ 65-67 %, ազոտային նյութեր՝ 9%, բջջաքաղանթ՝ 3.2-3.4 %, մոխրացող մնացորդ՝ 0.7-0.85%, B1 0.3-9 մգ:

Կիրառությունը: Պնդուկի ճարպերը ավելի հեշտությամբ են յուրացվում օրգանիզմի կողմից, քան ընկույզինը, այն օգտագործվում է էպիլեպսիայի դեպքում: Պնդուկը նպաստում է լյարդի քարերի լուծմանը, մայրերի մոտ առաջացնում է առատ կաթնարտադրություն: Ամիրդովլաթ Ամասիացին նշում է, որ պնդուկը ուժեղացնում է սեռական կարողությունը, օգտակար է երիկամների, ճիճվասույան է, ծեծված և մեղրի հետ խառնած վիճակում օգտակար է հազի բուժմանը: Պտղի կեղևի եփուկը լուծի դեմ է, եթե վառվի և մոխիրը խոզի ճարպի հետ քսվի վերքերին, կրուժի, իսկ գլխին քսվելուց ճաղատության դեմ է:

### ՄԱԼՈՐ (СЛИВА)



Բաղադրությունը: Ջուր՝ 81-83 %, շաքարներ՝ 3.4-3.6 %, ածխաջրեր՝ 4.4 %, թթուներ՝ 1.5 %, ազոտային նյութեր՝ 0.5 %, բջջաքաղանթ՝ 5%, մոխրացող մնացորդ՝ 0.5-0.6%:

Պարունակում է նաև միկրո, մակրոէլեմենտներ, 0.01-2.2 մգ վիտամին A, B խմբի վիտամիններ, 6-10 մգ վիտամին C, 0.63 մգ վիտամին E:

Կիրառությունը: Հին հունական բժիշկների տվյալներով քաղցր սալորը ակտիվացնում է աղիների աշխատանքը և վերացնում է փորկապությունը: Մալորը օգտագործում են աղեստամոքսային ցավերի հանգստացման, այրուցքի զգացողության վերացման համար: Կիրա-

ում են աթերոսկլերոզի, երիկամների ցավերի, պոդագրայի և ռևմատիզմի դեպքում: Մանրացված թարմ տերևները թարախային վերքերին ու խոցերին դնելուց նպաստում է նրանց արագ առողջացմանը: Չնայած կան սալորի շատ տեսակներ, բոլորն էլ ունենում են անոթները վնասակար մանրէներից մաքրելու հատկություն: Սալորը նպաստում է օրգանիզմից նաարիումի աղերի, ջրի ավելցուկի դուրս բերմանը, իսկ դա հիպերտոնիայի, սիրտ-անոթային հիվանդությունների, երիկամային անբավարարության դեպքում պայքարի միջոցն է: Սալորի հյութը առավտաները սոված վիճակում խմելու դեպքում մաքրում է օրգանիզմը, հատկապես լյարդը:

Թքու սալորը ի տարբերություն քաղցրի, պնդություն է առաջ բերում:

Ամիրդավլաթ Ամասիացին նշում է, որ տերևների եփուկով կատարված ողողումները օգնում են կոկորդի հիվանդությունների դեպքում, վերացնում են շնչափողի ուռուցքը, ամբացնում լնդերը: Սալորենու բուսախեժը լուծված վիճակում աչքի մեջ կաթեցնելը սուրմայի պես մաքրում է աչքը: Լուծված բուսախեժը խմելը վերացնում է չոր հազը, կոկորդի չորությունը: Բուսախեժը նաև օգնում է միզատար ուղիներում քարեր ունենալու դեպքում:

### **ՊԻՍՍՍԿ (ФИСТАШКА)**

**Բաղադրությունը:** Ջուր՝ 6.8-7.1 %, ճարպեր՝ 56-58%, սպիտակուցային նյութեր՝ 21-23%, բջջաքաղանք՝ 4.6%, մոխրացող նյութեր՝ 3.2-3.3%:

**Կիրառությունը:** Հնադարում պիստակը հայտնի էր որպես կենդանական թույների հակաթույն: Ավիցեննան գրել է, որ պիստակը լավ է ազդում լյարդային ցավերի, սրտխառնոցի, սրտի թուլության դեպքում. Այն օգտակար է թույլ, հյուծված, նիհար, հազացող հիվանդներին:

Ամիրդավլաթը նշում է, որ յուղը օգնում է մաշկային խաբձերի, պզուկների դեպքում, բուժում է կրծքավանդակի հիվանդությունները՝ հազը, ուժեղացնում սիրտը: Բացում է լյարդի խցանումը, ուժեղացնում սեռական հակումը, բուժում է խոցերը՝ չրոդնելով սպիներ: Պիստակի արտաքին նորբ կեղևը մաքրում է լյարդի անցուղիները, երկարացնում կյանքը:

## ԽՆՉՈՐ (ЯБЛОКО)



Բաղադրությունը: Ջուր՝ 82-88%, շաքարներ՝ 7.4-14 %, խնձորաթթու՝ 0.2-0.8%, դարադող նյութեր՝ 0.07-0.2 %, մոխրացող մնացորդ՝ 0.6-0.6%:


Պարունակում է նաև 16 մգ կալցիում, 248 մգ կալիում, 9 մգ մագնեզիում, 11 մգ ֆոսֆոր, 0.63 մգ երկաթ, 0.11 մգ պղինձ, 0.15 մգ ցինկ և համարյա բոլոր վիտամինները:

Կիրառությունը: Պլինուսը գրել է, որ ինքը մի կնոջ մոտ բուժել է զանգրենան՝ խոցի վրա դնելով փտած խնձորներ:

Ճարպի հետ տրորված խնձորը քսել են ճաքճաք ձեռքերին, շուրթերին, պտուկներին: Կալիումի աղերի, տանինի պարունակության շնորհիվ, խնձորը արգելակում է օրգանիզմի միզաթթվի կուտակմանը: Շենյեն խնձորի չորացրած կեղևից ստացված ալյուրով (մեկ ճաշի գդալը մեկ բաժակ ջրի հետ) հաջողությամբ կիրառել է երիկամային ու միզապարկային քարերի բուժման համար: Հում խնձորը օգտակար է դիզենտերիայի, գլխացավի, դեղնախտի, պնդության, աղիքային բոլոր տեսակի հիվանդությունների, սակավարյունության, փքվածության դեպքում:

Շատ օգտակար է խնձորային մոնոդիետան 7-14 օրով (օրեկան ուտել 400-500 գր խնձոր): Ամիրդուլլաթ Ամասիացին գրում է, որ եթե խնձորը եփվի, տրորվի ու դրվի աչքին, կսրի տեսողությունը և կհանգստացնի ցավը: Թթու խնձորը մահացու թունավորումների դեմ է, տերևների հյութը՝ ուռուցքների:

## ԹՈՒԹ (ТУТА)



Բաղադրությունը: Ջուր՝ 88-90 %, գլյուկոզա՝ 8-10%, օրգանական թթուներ՝ 1.7-1.9 %, ազոտային նյութեր՝ 0.37-0.4 %, պեկտիններ ու ճարպեր՝ 20-21 %, չլուծվող նյութեր՝ 2-1.3 %, մոխրացող մնացորդ՝ 0.5-0.5 %: Սև

թթի 1 լիտր հյութը պարունակում է 20-25 գր լիմոնաթթու: Սեւ թութը պարունակում է 6.32 % երկաթ, իսկ սպիտակը՝ 3.93 %: Թութը պարունակում է բազմաթիվ միկրո և մակրոէլեմենտներ, վիտամիններ:

Կիրառությունը: Սկսած հնադարից, թութը լայն կիրառություն է գտել և որպես բարձրարժեք սննդամթերք, և որպես դեղամիջոց: Հա-

սունները պտուղները վերացնում են փորկապությունը, իսկ ոչ հասունը՝ ընդհակառակը: Այդ պատճառով էլ վրացիները հնուց կարմիր թուրք օգտագործել են լուծի դեմ:

Թթի եփուկը՝ դռչարը մեր ժողովուրդը հնուց օգտագործել է շնչանական հիվանդությունների դեմ:

Հրաշալի բուժամիջոց է թթով մոնոդիտան (7-15 օրով): Այս դեպքում ի հայտ են գալիս քաղցարութության (ծոմապահության) բոլոր նշանները, և չնայած օրգանիզմը բավականին բարձրարժեք սնունդ է ստանում (օրեկան 1-2 կգ թուրք), 4-րդ օրվանից սկսած մարդու քաշը սկսում է պակասել օրական 700-1000 գրամ: Ստացվում է հետաքրքիր իրավիճակ. մարդն իրեն զգում է առողջ, կայտառ, ուժեղ, կուշտ և քաշ է կորցնում: Այդ ընթացքում օրգանիզմից հեռանում են կուտակված աղերն ու թափոնները, եփանդ ու ծեր բջջիջները, արյունը արագ փոխում է իր կազմը՝ թարմանում, առողջանում: Թափոնների արտազատումը այնպես բուռն է ընթանում, որ երիկամները չհասցնելով դրանց հեռացումը լրիվ իրագործել, մի մասը արտազատում են մաշկի միջոցով, որի հետևանքով մաշկի վրա կարող է առաջանալն ցան, պզուկներ:

Հատկատես բուժիչ է սև թուրքը: Թթի չիրը ձմռանը անփոխարինելի սնունդ է երեխաների ու մեծահասակների համար:

Ամիրդովլաթը նշում է, որ թուրքը բուժում է կոկորդի քաղցկեղը: Տերևների եփուկը բուժում է անզինան: Թթի հյութը առավել արագ է բուժում քաղցկեղային հիվանդությունները:

### *ԿԾՈՒՆՈՒՐ (ԵԱՐԵԱՐԻՑ)*

Բաղադրությունը: Պտուղները պարունակում են շաքարներ (գլյուկոզա և ֆրուկտոզա)՝ 4-5 %, օրգանական թթուներ՝ հիմնականում՝ խնձորաթթու (6-7%), մոխրացող նյութեր՝ 1%, հանքային աղեր, վիտամիններ: Ոչ հասուն պտուղները, տերևները, կեղևը, արմատը պարունակում են ալկոլոիդներ: Պտղակալման շրջանում տերևներում հայտնաբերվել են վիտամին E, եթերային յուղեր:

Կիրառությունը: Սկսած հնադարից կծոխուրը լայնորեն օգտագործվել է: Պտուղները լավ հազեցնում են ծարավը, խթանում ախորժակը, հանգստացնում գրգռված վիճակը, առաջացնում աղիների պնդություն լեղամուղ են, միզամուղ, օգնում են թուրքի դեպքում:

Ըստ իտալացի բժիշկների ուսումնասիրությունների՝ կծոխուրը լավ է ազդում փայծաղի մեծացման դեպքում (մալարիայից հետո):

Տերևների սպիրտային լուծույթը օգտագործում են լյարդի հիվանդությունների, փայծաղի մեծացման դեպքում: Կեղևի ջրաթուրմով



բուժում են յարդի, երիկամների հիվանդությունները, հատկապես՝ ջրգողությունը, դեղնախտը, լեղաքարային հիվանդությունները, պոդագրան, ունատիզմը, լյումբազոն: Իսկ արմատների կեղևի ջրաթորմը օգտագործում են արզանդային արյունահոսությունը դադարեցնելու համար:

Ժամանակակից բժշկությունը կեղևից ստանում է "Բերբերին" դեղամիջոցը: Հաստատված է, որ ծաղիկների թուրմը բուժում է սրտի հիվանդությունները, մաշարիան:

Տերևների սպիրտային լուծույթը օգտագործում են նաև հետժննդյան շրջանի արյունահոսությունների և արզանդի յորձաքաղանթի (էնդոմետրիայի) դեպքում: Լեղածորանի հիվանդությունների դեպքում կծոխուրը խավացնում է լեղու ելքը, քչացնում է ցավերը:

Կիրառության ձևերը.

1) Տերևների սպիրտային լուծույթը (26 կաթիլ) օրեկան 2-3 անգամ օգտագործել 2-3 շաբաթվա ընթացքում:

2) 1 թեյի գդալ արմատի կեղևը լցնել 2 բաժակ եռացող ջրի մեջ և պահել 4 ժամ, քանել: Խմել օրվա ընթացքում, կումերով:

Տիրեթական բժշկությունը կծոխուրի արմատը օգտագործում է որպես քրտնեցնող, արյան բարձր ճնշումը իջեցնող, գրգռված վիճակը հանգստացնող միջոց.

Ըստ Ամիրդովլաթ Ամասիացու՝ արմատի կեղևը ամրացնում է առանձները, բուժում քաղցկեղային խոցը, ամրացնում մազարմատը, սրում տեսողությունը, օգնում է կոստիի բորբոքման, աղիների խոցերի դեպքում:

### *ՀԱՊԱԼԱՍ (БРУСНИКА)*

Բաղադրությունը: Ջուր՝ 88-90%, խնձորաթթու և լիմոնաթթու՝ 2.2-2.4 %, շաքար՝ 1.4-1.6%, ազոտային նյութեր՝ 0.1-0.2%, բենզոլաթթու՝ 0.07-0.21 %, վիտամին A, B խմրի վիտամիններ, 15 մգ վիտամին C, միկրո և մակրոէլեմենտներ:

Կիրառությունը: Ջրով նոսրացած հյութը սրվում է բարձր ջերմաստիճանի դեպքում: Չորացված տերևների ջրաթորմը խմում են որպես՝ թեյ քարային հիվանդությունների, ունատիզմի դեպքում:



## ԽԱՂՈՂ (ВИНОГРАД)

Խաղողի մասին ամենաբից լեզենըր առնչվում է Նոյ Նահապետի անվանը՝ տապանը Արարատ լեռանը նստելուց հետո: Ստացվում է, որ մշակույթն սկսվել է Արարատյան դաշտավայրում:

Բաղադրությունը: Ջուր՝ 75-80%, շաքարներ՝ 18-20%, զինեթթու 0.6-0.7 %, խնձորաթթու՝ 0.4-0.6 %, ազոտային նյութեր՝ 0.3-0.5%, հանքային նյութեր՝ 0.7-0.12%, այլ օրգանական թթուներ, կալիումի, կալցիումի, երկաթի աղեր, դաբաղանյութեր, ներկանյութեր, բազմաթիվ վիտամիններ, բջջաթաղանթ, օսլա, պեկտինային նյութեր: Տերևները պարունակում են 2% շաքար, վիտամին C և այլ արժեքավոր միացություններ:

Կիրառությունը: Դիտակորիզը չհասունացած պտուղների հյութը օգտագործել է ջերմությունը իջեցնելու համար, անզինայի, բերանի խոցի, արյունաթորության դեմ: Կորիզներն ու պտղի կեղևը լուծի դեմ են: Չամիչը հազի, միզափամփուշտի հիվանդության դեմ է:

Պավել Էզինը խաղողի հյութը օգտագործել է ծարավի հազեցման, դիզենտերիայի, քարային հիվանդության ու ախորժակի բացակայության դեպքում:

Սալերանյան դպրոցը խաղողի հյութը նշանակել է որպես միզամուղ միջոց, չամիչը՝ թոքերի, անոթների, լյարդի հիվանդությունների և լուծի դեպքում:

Ֆլամանը. տերևներից ստացված այուրը 2-4 գրամ խմել հանձնարարելով, բուժում էր արգանդային արյունահոսությունները:

Կրյուշոն նշել է խաղողի հիանալի ազդեցությունը խոտառության և ձայնի կորստի դեպքում:

Յիսերմանը, Պրինզլեն խաղողը օգտագործել են քարախային լուծի, Բոզենհեյնը սակավարյունության բուժման համար:

